Արձանագրություն № 4
գնահատող հանձնաժողովի նիստի

| 1. Տվյալներ պատվիրատուի, ընթացակարգի (ծածկագիր), ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռք բերման, նիստի անցկացման մասին | |
|---|---|
| Պատվիրատու | *«ՀԱԷԿ» ՓԲԸ* |
| Գտնվելու վայրը | *ՀՀ Արմավիրի մարզ, ք.Մեծամոր* |
| Ընթացակարգի ծածկագիրը | **ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-3/17** |
| Ձեռք բերվող ծառայության անվանումը | **««ՀԱԷԿ» ՓԲԸ ռեակտորի հզորության ռեժիմի համար նոր վթարային շահագործման ընթացակարգերի (ՎՇԸ) փորձաքննություն»** |
| Նիստի անցկացման վայրը | *ք.Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ վարչական շենք, 136 սենյակ* |
| Նիստի անցկացման օրը և ժամը | Կասեցված հայտերի գնահատման նիստի վերսկսում |
| Նիստի անցկացման նպատակը | 23.08.2017թ. ժամը 14:00 |
| **2. Տվյալներ նիստին ներկա հանձնաժողովի կազմի, մասնակիցների կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչների մասին** | |
| Հանձնաժողովի նախագահ | Ա. Մ. Օրդուբեկյան ԳՃՏ շահագործման գծով |
| Հանձնաժողովի անդամներ | Հ. Հ. Հունանյան ԳՃՏ-ՈՒՎԿ-ի պետ (գնահատող) |
| | Ս. Ա. Սարգսյան ՄԱևՀԲ պետի տեղակալ (գնահատող) |
| | Ս. Ռ. Աթայան ՆՊԲ ճարտարագետ (բացող) |
| | Գ. Գ. Մարգարյան ՖՏԲ առաջատար տնտեսագետ (բացող) |
| Քարտուղար | Ա. Հ. Ղազարյան ԳԿԲ գլխավոր մասնագետ |

Հանձնաժողովը մասնակցի <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը գնահատելու նպատակով ուսումնասիրեց մասնակցի՝<<Միջուկային և ռադիացին անվտանգության գիտատեխնիկական կենտրոն>> ՓԲԸ կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերը (<<ՀԱԷԿ ՓԲԸ հետ 14.04.2016թ. կնքված 09/157 պայմանագիրը, պայմանագրային գումարը 7 794 844 ՀՀ դրամ>> , <<ՀԱԷԿ ՓԲԸ հետ 13.10.2016թ. կնքված 01/470 պայմանագիրը, պայմանագրային գումարը 3 178 489 ՀՀ դրամ>>, Ատոմային էներգիայի միջազգային գործակալության 12.04.2015թ. թիվ 201506047-BU գնման հանձնարարականը և 11.01.2017թ. թիվ IAEA-001/15-001 հաշիվ ապրանքագիրը 39 96 եվրո):

Համաձայն հրավերի 2.5 կետի 1 մասի

<<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում **պատշաճ ձևով իրականացրած լինի** նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում **փորձարարական մշակման** ծառայությունների մատուցված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ **պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած**

**կողմի գրավոր հավաստումը:**

Հանձնաժողովը ուսումնասերելով վերը նշված պայմանագրերը արձանագրեց, որ

1. <<ՀԱԷԿ ՓԲԸ հետ 14.04.2016թ. թիվ 09/157 պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել 30 ապրիլի 2016թ., որի կատարման ժամկետը մեկ անգամ երկարացվել է և սահմանվել է մինչև 30 մայիսի 2016թ.:
   Սակայն հանձնման-ընդունման արձանագրությունը կազմվել է 27 հունիսի 2017թ.-ին, քանյոթ օր ուշացումով:

2. <<ՀԱԷԿ ՓԲԸ հետ 13.10.2016թ. կնքված 01/470 պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել 30 դեկտեմբերի 2017թ.:
   Սակայն հանձնման-ընդունման արձանագրությունը կազմվել է 31 հունիսի 2017թ.-ին, 30 օր ուշացումով:

3. Ատոմային էներգիայի միջազգային գործակալության 12.04.2015թ. թիվ 201506047-BU գնման հանձնարարականի համաձայն առաքման ամսաթիվը սահմանված է 25.05.2016թ, սակայն թիվ IAEA-001/15-001 հաշիվ ապրանքագրը կազմվել է 11.01.2017թ.:

Նկատի ունենալով, որ 18.08.2017թ.-ին հայտերի գնահատման նիստը կասեցվել է մասնակցին՝ <<Միջուկային և ռադիացին անվտանգության գիտատեխնիկական կենտրոն>> ՓԲԸ-ին տալով հնարավորություն շտկելու <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը գնահատելու նպատակով ուղարկված պայմանագրերում տեղ գտած անճշտությունները, սակայն ներկայացված պայմանագրերը դարձյալ չեն բավարարում հրավերով սահմանված պահանջներին:, Ռիստի հանձնաժողովը առաջարկեց մերժել մասնակցի կողմից ներկայացված հայտը և գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

**Ընդունվեց որոշում՝ կողմ – 5 , դեմ - 0 :**

**Հանձնաժողովի նախագահ՝** __________ Ա. Մ. Օրդուբեկյան

**Անդամներ՝** __________ Հ. Հ. Հունանյան

__________ Ս. Ա. Սարգսյան

__________ Ս. Ռ. Աթայան

__________ Գ. Գ. Մարգարյան

**Համակարգող քարտուղար՝** __________ Ա. Հ. Ղազարյան